ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0010, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4, Հեռ. 543 991, Ֆաքս 543 997, E-mail: info@anra.am

No 11-Ա-42 31.08. 2011թ.

Ձեր No Հ/Ա-2011/169 28.06. 2011թ.
[ Ռադոն գազի արտազատման
ուսումնասիրությունների մասին]

«Գեոթիմ» ՓԲԸ-ի տնօրեն
պարոն Հ.Ալոյանին

Հարգելի պարոն Ալոյան

«Գեոթիմ» ՓԲԸ-ի կողմից Վայոց ձորի մարզում իրականացված ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղադրված 149 դետեկտորներից 142-ը գրանցել են միջազգային նորմերով սահմանված թույլատրելի արժեքներ, իսկ 7-ը գրանցել են թույլատրելի մակարդակը գերազանցող ծավալային ակտիվության արժեքներ (Det.No.: 3481132, 1069442, 3560422, 3540077, 3985116, 4906202, 2039113):

Նշված 7 դետեկտորների տեղադրման շինությունների բնակելի սենքերում ցանկալի է, որպեսզի իրականացվեն սենքերի օդային տարածք ռադոնի ներթափանցմանը խոչընդոտող և օդափոխության լավացմանն ուղղված պաշտպանական միջոցառումներ:

Կատարված հետազոտությունների տվյալները կարելի է համարել զրոյական (ֆոնային): Խորհուրդ է տրվում հանքարդյունահանման աշխատանքները սկսելուց հետո նույն տեղադրման սենքերում իրականացնել նմանատիպ չափումներ՝ կատարելով համեմատություն վերը նշված զրոյական (ֆոնային) արժեքների հետ:

Հարգանքով՝

Ա. Մարտիրոսյան

Ա.Ստեփանյան
581654